

Ղապուկէ՛աւ եւ Պապա անուամբ», որոնց պաշտօնը լաւ արտայայտած բլլալու համար, Հաննէ զանոնք կը նմանցընէ լափլիզող գայլերու եւ կատաղի շուներու:

Միաբանութիւնը ահաբեկելու համար ոչ միայն բանտ, կալանք, աքսոր՝ իրենց սովորական միջոցներն էին, այլ մանաւանդ Աթոռը եւ իրենց անձր պաշտպանելու քաջութիւնն ունեցող միաբաններ, կը մատնուէին ծանր ամբաստանութիւններով: Այս գործակալներն իրենք ալ շնորհիւ եւ աքսորի կեանքն ապրողներ եղած են ընդհանրապէս իրենց քննիչ շարք-Բեանց համար: Քահանաներ ալ գտնուած են այս գործակալներուն մէջ:

Վոլոտ՝ Պապաներու մէջ զգուանքով ու սոսկումով կը յիշէ Յովհաննէսը, այն «անյագն ի չարիս Բէլն երկրորդ, Պալլքէսերցին փոխանորդ եւ վէքիլ», որ իր երեք չորս ընկերներուն հետ, Գանձակեցի Յովհաննէս պատրիարքին կողմէն, Երուսաղէմ գացին իբր վէտիլ,¹ չորսն ալ Հաննէի բացատրութեամբ «արք ժանկուտեալք հնագոյն ամբարշտութեամբ», որոնց արարքը պատկերացրնելու համար շատ նեղութիւն կը զգայ պատմիչը:

Այսչափ կեղեքումներու, զեղծումներու հետեւանքով Երուսաղէմի Աթոռը պարաքի մէջ խեղդուած էր. պարտատէրներ աննկարագրելի խժոժութիւններ կ'ընէին Ս. Յակոբի վանքին մէջ. յայտնի ժամերգութիւնք գրեթէ դադրած, ուսում, գիտութիւն, ընթերցում շատոնց արդէն խոյս տուած էին. միաբաններ իրենց խուցերուն

¹ Վոլոտ այս միջոցին Երուսաղէմ էր արդէն. Սահակ պատրիարքի կողմէն իբր «Աթոռակալ եւ Վէքիլ», Բայց Սահակայ տեղ Գանձակեցին անցած էր, հետեւաբար առանց նկատելու Վոլոտի դիրքն ու պաշտօնը, իր կողմէն Պալլքէսերցին ղրկեց Երուսաղէմ: Բայց Վոլոտ կրցաւ իր խոհեմութեամբ ձախողընէլ այս «չար» պապային շահատարութիւնները: